

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 57/8

25 դեկտեմբերի 2012թ.

Քննարկվեց Ա/Ձ Արման Կարապետյանի 13.12.2012թ. գրությամբ բերված գանգատը «ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 09.11.2012թ. թիվ 2118272 ստուգման ակտի դեմ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 11.10.2012թ. թիվ 2118272 հանձնարարագրի, «Կ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Արման Կարապետյանի մոտ կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը «Կ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու և հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 09.11.2012թ-ին կազմվել է թիվ 2118272 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ստուգման ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ Կենտրոնի հարկային տեսուչ Գոռ Հարությունյանին 25.10.2012թ-ին ժամը 14:30-ին ք.Երևան, Նալբանդյան 25/14 հասցեում գտնվող գեղեցկության սրահում մատուցվեց ծառայություն 2000 դրամի չափով՝ վարսերի հարդարում 2000 դրամ արժեքով, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: 2000 դրամ գումարը մուտքագրվեց ՀԴՄ, սակայն համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց:

Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են «Կ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները: Արդյունքում «Կ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» «Կ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն առաջադրվում է տուգանք 150.000 դրամի չափով:

Ա/Ձ Արման Կարապետյանի գանգատում մասնավորապես նշված է.

«Կ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի գրությունում նշվում է, որ իմ կողմից ՀԴՄ-ի կտրոնը չի տրամադրվել հսկիչ գնում իրականացնողին: Այս կապակցությամբ ինձ մոտ առաջացել են հարցեր.

- Երբ և ում կողմից է կատարվել հսկիչ գնումը,
- Ում կողմից և ի՞նչ ծառայություններ է մատուցվել հսկիչ գնման արդյունքում,
- Երբ և որտե՞ղ է հսկիչ գնման արդյունքում հարկային մարմնի կողմից կազմվել սահմանված ձևով արձանագրություն,
- Ով է ստորագրել արձանագրությունը և ինչու ինձ չի տրվել արձանագրության օրինակը:

Վերը նշված գրության մեջ երկրորդ եզրահանգումը չի մտնում և ոչ մի տրամաբանության շրջանակ: Փաստորեն Կենտրոնի ՀՏ-ն, իր կողմից կազմված արձանագրության հիմքում տեսնում է. «ՀԴՄ ժապավենի մեկ կտորի վրա արտացոլվածը տարբեր ժամերի 10 ծառայությունների վճար, որոնք նույնպես չեն տրամադրվել ծառայություններ ստացողներին»: Այսպիսով, փաստում եմ, որ Կենտրոնի ՀՏ-ն զբաղվում է նաև գուշակությամբ: Այստեղ ես ունեմ մի քանի հարց՝

- Ինչ է նշանակում ապացույց, փաստ, գուշակություն,
- Ինչպես է պարզվել, որ տարբեր ժամերի 10 ծառայությունների համար ՀԴՄ կտրոններ չեն տրամադրվել ծառայություններ ստացողներին,
- Ինչպես է պարզվել, որ ծառայություն ստացողները չեն, որ հոժարակամ թողել են խնդրո առարկա հանդիսացած ՀԴՄ կտրոնները,
- Ինչպես է պարզվել, որ խնդրո առարկա հանդիսացած 10 ծառայությունների կտրոնները տարբեր ժամերին չի տրամադրվել նույն մարդուն,
- Ինչպես է պարզվել, որ մեկ մարդուն կարող է տրամադրվել ընդամենը 1 ծառայություն:

Հարցերի շարանը կարելի է անվերջ շարունակվել, սակայն անցնեմ գրության հաջորդ դրվագին: Հետաքրքիրն այն է, որ նույն փաստական հանգամանքների մի դրվագում ՊԵԿ Կենտրոնի ՀՏ գրություններն ինձ են բերում անհայտ մարդիկ և տրամադրում առձեռն, իսկ մյուս դրվագներում նույն կառույցը օգտվում է <<Հայփոստ> ՓԲԸ ծառայությունից: Ի դեպ, այն դեպքերում, երբ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ օգտվում է <<Հայփոստ> ՓԲԸ ծառայություններից, ինձ գրությունները չեն հասնում: Օգտվելով առիթից, հայտարարում եմ, որ ես <<Հայփոստ> ՓԲԸ թիվ 10 փ/թ առաքանի 1128, 10 փ/թ առաքանի 5028 միջոցով ուղարկված փաստաթղթերը չեմ ստացել: Հայտարարում եմ նաև, Կենտրոնի ՀՏ կողմից իմ նկատմամբ իրականացված գործառույթներից ես տեղյակ չեմ, քանի որ պատշաճ չեմ տեղեկացվել: Այս խնդրի հետ կապված ունեմ ևս մի քանի հարց, մասնավորապես՝ ինչու՞ ինձ չեն հասել <<Հայփոստ> ՓԲԸ-ի միջոցով ուղարկված գրությունները, ովքե՞ր են անհայտ մարդիկ, որոնք ինձ են առաքում գրությունները, ի՞նչ հասցեով են գրությունները ուղարկվում:

Ես կարող եմ կողմ կամ դեմ լինել մի փաստաթղթի, որը ունեմ ձեռքիս տակ և գիտեմ դրա բովանդակությունը: Տվյալ դեպքում ես չգիտեմ ինչ արձանագրության մասին է խոսքը, ով է այն կազմել և ինչ բովանդակությամբ: Այս պարագայում փորձում եմ հարցերի միջոցով ինչ-որ բան պարզել: Եթե այնուամենայնիվ, չկարողանամ այս եղանակով պարզություն մտցնել խնդրո առարկա հանդիսացող պատմության մեջ, ապա համարեք, որ այս գրությամբ հայտարարում եմ, որ դեմ եմ իմ հանդեպ այսօրինակ գործողությունների իրականացմանը:

<< ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), հաշվի առնելով Ա/Ձ Արման Կարապետյանի ներկայացուցչի և ստուգման իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ ստուգման ակտը կազմված է << օրենսդրության պահանջների խախտմամբ հետևյալ պատճառաբանությամբ:

<<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> << օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն, ակտում նշվում են ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը (եթե հնարավոր է որոշել) և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել:

Քննարկվող դեպքում ստուգման ակտում, որպես իրավական նորմ, որի պահանջները չեն կատարվել, նշվել է << կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված <<Սևիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններ>-ի 19-րդ կետի <բ> ենթակետը:

<< կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված <<Սևիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններ>-ի 19-րդ կետի <բ> ենթակետի համաձայն. <Պատասխանատու անձը պարտավոր է ՀԴՄ-ի միջոցով տպել և գումարն (ներառյալ կանխավճարը) ստանալու պահին ապրանքի հետ միասին գնորդին, պատվիրատուին տրամադրել դրամարկղային չեկ (կտրոն), իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով վիճակահանության (այսուհետ՝ վիճակահանություն) անցկացման ժամանակահատվածում՝ ժապավենի դարձերեսին հատուկ համար (համարներ) պարունակող չեկ (կտրոն)>:

<< կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված <<Սևիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններ>-ի 19-րդ կետի <գ> ենթակետի համաձայն. <ծառայությունների մատուցման դեպքում՝ չեկը (կտրոնը) տրամադրվում է այդ ծառայության դիմաց կանխիկ վճարում (ներառյալ կանխավճար) ստանալու պահին>:

Հանձնաժողովը գտնում է, որ ստուգման ակտում, ըստ էության, սխալ է նշված իրավական այն նորմը, որի պահանջները չեն կատարվել: Մասնավորապես, քննարկվող դեպքում (ըստ ստուգման ակտի) 25.10.2012թ-ին ժամը 14:30-ին ք.Երևան, Նալբանդյան 25/14 հասցեում գտնվող գեղեցկության սրահում մատուցվել է ծառայություն 2000 դրամի չափով, որի գումարը մուտքագրվել է ՀԴՄ, սակայն համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Այսինքն՝ ստուգման ակտում, որպես իրավական նորմ, որի պահանջները չեն կատարվել, պետք է նշվեր ոչ թե << կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ

հաստատված <Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններ>-ի 19-րդ կետի <բ> ենթակետը, այլ՝ <գ> ենթակետը:

Վերոգրյալից հետևում է, որ ստուգման ակտը կազմվել է <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի պահանջների խախտմամբ:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ գործում առկա չեն բավարար ապացույցներ ստուգման ակտի 2-րդ կետում նշված ծառայությունը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ հարկային տեսուչ Գոռ Հարությունյանին մատուցված լինելու վերաբերյալ, Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Արման Կարապետյանի 13.12.2012թ. գրությամբ բերված գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### **ո Ր Ո Յ Ո Ւ Մ Է՝**

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 09.11.2012թ. թիվ 2118272 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ՔԱՐՍԵՂՅԱՆ